# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատման նիստի

գ. Ծովինար «20» օգոստոսի 2021թ.
ժ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ս. Բալոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մանուկյան, Հ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

**ՀՀ ԳՄ ԾՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգ**

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

**1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.**

1. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 2021 թվականի օգոստոսի 17-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր բոլոր մասնակիցներին՝ 07.07.2021թ.-ին ժամը 11-00-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին ներկայացել էր միայն «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ն, որը չվերանայեց իր կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկը: Արդյունքում մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները թողնվեց անփոփոխ:

2. Ծովինար համայնքի խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | 144478000 | 120000000 | 24000000 | 144000000 |
| 2 | «Նավասարդ Շինարար» ՍՊԸ | | 124763195 | 24952639 | 149715834 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**2. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.**

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝30.08.2021թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում.**

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք hասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ______________ Ս. Բալոյան

նդամներ՝ ______________ Ա. Մանուկյան

______________ Հ. Գալստյան

Քարտուղար՝ ______________ Ժ. Խաչատրյան